ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ - Ա

1988 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՌՈԲԵՐՏ ԼԵՎՈՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՓԱՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշման հավելվածի 9.1-ին կետի՝ հիմք ընդունելով Ռոբերտ Լևոնի Թադևոսյանի դիմումը, Հասմիկ Գևորգյանի և Կիմա Մուրադյանի բացատրագրերը և հայտարարությունները, Հրայր Համբարյանի, Նորիկ Պապիկյանի, Ֆելիքս Ափուջանյանի և Նորիկ Գրիգորյանի կողմից ստորագրված հավաստագիրը, Նազանի Ադամյանի, Համլետ Մարտիրոսյանի, Հրուշ Համբարյանի, Ռուզաննա Ասատրյանի հայտարարությունները, ամուսնության վկայականը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող բնակավայրի վարչական ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 0628 տեղեկանքը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրի բնակիչ Ռոբերտ Լևոնի Թադևոսյանի ընտանիքը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ բաղկացած է եղել երկու անձից.

Ռոբերտ Լևոնի Թադևոսյան՝ ծնված 01.06.1961 թվականին,

Սոֆյա Հրաչիկի Հակոբյան՝ ծնված 16.01.1960 թվականին:

2.Հաստատել այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրի բնակիչ Ռոբերտ Լևոնի Թադևոսյանի ընտանիքը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ Արևաշող գյուղում՝ 06-021-0028-0003 կադաստրային ծածկագրով հողամասի վրա, ունեցել է բնակելի տուն, որը երկրաշարժի հետևանքով քանդվել է: